

Ֆինանսական հաշվետվություններ

Երևանի «Շամպայն գինիների գործարան»

Բաց Բաժնետիրական Ընկերություն

առ 30 հունիսի 2012թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ

	Ծա նոթ	2011թ. դեկտեմբե րի 31-ի դրությամբ	2012թ. Հունսի 30-ի դրությա մբ
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	2,444,136	2,417,729
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	5	50	50
Շահութահարկի կանխավճար 1%		-	10,054
Հետաձգված հարկային ակտիվներ	6	5,700	5700
		<u>2,449,886</u>	<u>2,433,533</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	7	1,106,659	1,100,174
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	563,265	369,006
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	9	16,995	66,436
		<u>1,687,919</u>	<u>1,535,616</u>
Ընդամենը ակտիվներ		<u>4,136,805</u>	<u>3,969,149</u>
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
<i>Կապիտալ և պահուստներ</i>			
Կանոնադրական կապիտալ	10	888,732	888,732
Պահուստային կապիտալ	10	390,587	390,587
Կուտակված շահույթ		215,615	165,698
		<u>1,494,934</u>	<u>1,445,017</u>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Բանկային վարկեր	11	201,323	201,323
Ակտիվների վերաբերվող շնորհներ		1,872,293	1,872,293
		<u>2,073,616</u>	<u>2,073,616</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Բանկային վարկեր փոխառություններ	11	350,157	329,967
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	215,652	120,549
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		2,446	-
		<u>568,444</u>	<u>450,516</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u>4,136,805</u>	<u>3,969,149</u>

Գործադիր տնօրեն
Ֆիամենտա Հակոբյան

Գլխավոր հաշվապահ
Հովհաննես Իսկաջյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	2011թ. Կիսամյակ	2012թ կիսամյակ	2011թ.2- րդ եռամյակ	2012թ.2- րդ եռամյակ
Հասույթ	472,335	401,351	285,167	253,751
Վաճառքի ինքնարժեք	<u>(362,844)</u>	<u>(356,152)</u>	<u>(215,164)</u>	<u>(219094)</u>
Համախառն շահույթ	<u>109,491</u>	<u>45,199</u>	<u>70,003</u>	<u>34657</u>
Այլ եկամուտներ	4,226	19,412	2445	10822
Իրացման ծախսեր	(75,414)	(72,476)	(33,696)	(41459)
Վարչական ծախսեր	(45,793)	(34,142)	(23,173)	(17576)
Այլ ծախսեր	<u>(839)</u>	<u>(7604)</u>	<u>(78)</u>	<u>(1193)</u>
Գործառնական գործունեությունից շահույթ	<u>(8329)</u>	<u>(49,611)</u>	<u>15,501</u>	<u>(14749)</u>
Ֆինանսական ծախսեր	(4,858)	(13,257)	(1,889)	(6521)
Այլ ֆինանսական հոդվածներ	<u>(3,083)</u>	<u>12951</u>	<u>(1,746)</u>	<u>(22199)</u>
Շահույթ սինչև հարկերը	<u>(16270)</u>	<u>(49,917)</u>	<u>11,866</u>	<u>(43469)</u>
Շահութահարկի գծով ծախս Տարվա շահույթ	<u>(16270)</u>	<u>(49,917)</u>	<u>11,866</u>	<u>(43469)</u>
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-		
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	<u>(16270)</u>	<u>(49,917)</u>	<u>11,866</u>	<u>(43469)</u>
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ դրամ	<u>-73</u>	<u>-223</u>	<u>53</u>	<u>-194</u>

Գործադիր տնօրեն
Ֆիանետա Հակոբյան

Գլխավոր հաշվապահ
Հովհաննես Իսկաջյան

1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

1.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբերվող այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից հրապարակված՝ արտարժույթային շուկաներում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են այլ համապարփակ եկամուտներում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում: Նման ոչ դրամային հոդվածների դեպքում շահույթի կամ վնասի ցանկացած փոխարժեքային բաղադրիչ նույնպես ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

1.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարներ, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության կամ վարչական կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն ընկերության որդեգրած քաղաքականության: Այս ակտիվների մաշվածությունը ևս հաշվարկվում է, երբ

դրանք դառնում են պատրաստ իրենց նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր, շինություններ	- 20 տարի
Համակարգչային տեխնիկա	- 1 տարի
Մեքենաներ, սարքավորումներ	- 5 տարի
Արտադրական, տնտեսական գույք	- 5 տարի
Տրանսպորտային միջոցներ	- 10 տարի:

1.3 Վարձակալված ակտիվներ

Համաձայն ՀՀՍՍ 17. «Վարձակալություն»՝ վարձակալությունը պայմանավորվածություն է, որով վարձատուն վճարի կամ վճարների շարքի դիմաց համաձայնեցված ժամկետով վարձակալին է փոխանցում ակտիվի օգտագործմուն իրավունքը: Եթե վարձակալին չեն փոխանցվում սեփականության իրավունքի հետ կապված բոլոր ռիսկերը և օգուտները, ապա վարձակալությունը դասակարգվում է որպես գործառնական:

Գործառնական վարձակալության գծով վճարները գծային հիմունքով ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության, ծախսագրվում են իրականացման պահին:

1.4 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համարման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով միջին կշռված մեթոդը և ներառում է պաշարների ձեռք բերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

1.5 **Ֆինանսական գործիքներ**

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները, բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

- դեբիտորական պարտքեր,
- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և որը ցույց է տալիս, թե իրական արժեքի փոփոխության արդյունքում ստացվող օգուտներն ու վնասերը պետք է ճանաչվեն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, թե ուղղակիորեն սեփական կապիտալում: Ընկերության ֆինանսական ակտիվներն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 20.2-ում:

Ընդհանուր առմամբ, Ընկերության բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվի արժեզրկման գնահատումն իրականացվում է առնվազն յուրաքանչյուր հաշվետու

ամասքվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար «ֆինանսական ծախս» և «ֆինանսական եկամուտ» հոդվածներում:

I. Առևտրային և դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և ժամանակին չվճարումը ցուցանիչ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

II. Մնացորդներ դրամարկդում և բանկերում

Մնացորդներ դրամարկդում և բանկերում ներառում են կանխիկ միջոցներ, բանկային հաշիվների մնացորդներ և դրամական միջոցներ ճանապարհին, որոնք ներկայացված են ֆինանսական ակտիվների «վարկեր և դեբիտորական պարտքեր» կատեգորիայում:

III. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ արժեքի փոփոխությունները ուղակիորեն ճանաչելով սեփական կապիտալում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ, երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, փոխանցվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Սեփական կապիտալի գործիքներից առաջացած և ֆինանսական համապարփակ արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված վնասները չեն հակադարձվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում: Նախորդ ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված պարտքային արժեքի արժեզրկումից առաջացած վնասները հակադարձվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե համապատասխան աճը հիմնվում է այն

դեպքի վրա, որը տեղի է ունեցել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արժեզրկումից վնասի ճանաչումից հետո:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը՝ ներառյալ ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները, որոնք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

I. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

1.6 Արժեզրկում

Հիմնական միջոցների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը

չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեգրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեգրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեգրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ֆինանսական ակտիվների արժեգրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեգրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեգրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեգրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեգրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեգրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեգրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեգրկում ճանաչված չլիներ:

Ինչ վերաբերում է վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի արժեթղթերին, արժեգրկումից հետո իրական արժեքի աճն ուղղակիորեն ճանաչվում է սեփական կապիտալում:

1.7 Պետական շնորհներ

Պետական շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստացված հողին վերաբերող շնորհները, սխտեմատիկորեն փոխանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ այդ հողերի վրա տեղակայված շինությունների օգտակար ծառայության ժամկետներին համամասնորեն:

Պետական շնորհները, որոնց հիմնական պայմանը Ընկերության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին

հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սխտեմատիկորեն փոխանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ պետական շնորհները ճանաչվում են սխտեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Պետական շնորհը, որը հատկացվում է Ընկերությանն՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

1.8 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

1.9 Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի գեղջման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

1.10 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գույվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

1.11 Հասույթի ճանաչում

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրված ցանկացած առևտրական գեղչերը և իջեցումների գումարները:

Ապրանքների վաճառք

Հասույթը հիմնականում ստացվում է այնպիսի ոգելից խմիչքների վաճառքից, ինչպիսիք են շամպայնը, օղին, գինին, կոնյակը և այլն, և ճանաչվում է, երբ ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և փոփոխատուցումների մեծ մասը գնորդին է փոխանցվել, չկան էական անորոշություններ կապված վերլուծությունների, կապակցված ծախսերի ու ապրանքների հնարավոր վերադարձների հետ և հասույթի գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

Վարձակալական եկամուտ

Ներդրումային գույքից վարձակալական եկամուտը ճանաչվում է հաշվեգրման սկզբունքով՝ համաձայն պայմանագրի:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ի Գործադիր տնօրեն՝ Ֆիամետա Հակոբյանը, Գլխավոր հաշվապահ՝ Հովհաննես Իսկաջյանը, Փոխտնօրեն՝ Գագիկ Մինասյանը, Իրավախորհրդատու՝ Սերգեյ Հակոբյանը սույնով հայտարարում ենք այն մասին, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Ընկերության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել է կամ առնչվում է ընկերությունը:

Գործադիր տնօրեն

Ֆիամետա Հակոբյան

Գլխավոր հաշվապահ

Հովհաննես Իսկաջյան

Փոխտնօրեն

Գագիկ Մինասյան

Իրավախորհրդատու

Սերգեյ Հակոբյան

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Միջանկյալ հաշվետվություն
Երկրորդ եռամսյակ

ԵՐԼԱՆԻ «ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան, Թբիլիսյան խճուղի 20, հեռ. 28 – 54 – 76, ֆաքս 28 – 54 – 68

էլ. փոստ info@armchampagne.am

N 13 14.08.2012թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ հասարակ, անվանական

արժեթղթերի քանակը՝ 222183 հատ

արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ 4000 ՀՀ դրամ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել հաշվետվության ամբողջականությունը»:

ստորագրող անձինք՝

<u>Հ.Իսկաթյան</u> (անուն, ազգանուն)	<u>Գլխավոր հաշվապահ</u> (պաշտոն)	_____	<u>14.08.2012թ.</u> (ամսաթիվ)
<u>Գ. Մինասյան</u> (անուն, ազգանուն)	<u>Փոխտնօրեն</u> (պաշտոն)	_____	<u>14.08.2012թ.</u> (ամսաթիվ)
<u>Ս. Հակոբյան</u> (անուն, ազգանուն)	<u>Իրավախորհրդատու</u> (պաշտոն)	_____	<u>14.08.2012թ.</u> (ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում են (ստորագրությունները վավերացվում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի, կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)՝

<u>Ֆ. Հակոբյան</u> (անուն, ազգանուն)	<u>Գործադիր տնօրեն</u> (պաշտոն)	_____	<u>14.08.2012թ.</u> (ամսաթիվ)
---	------------------------------------	-------	----------------------------------

Կ.Տ.

Միջանկյալ զեկույց

2012թ. երկրորդ եռամսյակի ընթացքում Ընկերության կողմից

իրականացված գործունեության վերաբերյալ

**Ջեկուցող Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ի Գործադիր
տնօրեն Ֆիամետա Ֆրանսիկի Հակոբյան**

Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ի բաժնետոմսերը դասվում են որպես հասարակ, անվանական բաժնետոմսեր, ներկայումս դրանք ոչ փաստաթղթային ձևի են: Քանակը կազմում է 222183 հատ: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 4000 հայկական դրամ: Բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները և պարտականությունները սահմանվում են Ընկերության կանոնադրությամբ և «Բաժնետիրական Ընկերությունների մասին» ՀՀ օրենքով: Բաժնետոմսերի նկատմամբ իրավունքների և պարտականությունների գրանցումը կատարում է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա » ԲԲԸ – ն: Կանոնադրական կապիտալի չափը կազմումում է 888732000 դրամ: Կանոնադրական կապիտալը 100 տոկոսով ձևավորված է սովորական բաժնետոմսերից, որոնց քանակը կազմում է 222183 հատ: Մասնակիցների կողմից իրենց պատկանող արժեթղթերի դիմաց վճարման պարտավորությունը 100 տոկոսով կատարված է:

Ընկերությունը հիմնականում զբաղվում է ալկոհոլային խմիչքների արտադրությամբ և վաճառքով: Առավել կարևորվում են շամպայն գինիների, օղու և կոնյակների արտադրության ոլորտները, որոնց զարգացման հիմնական ուղղությունները կայանում են նոր տեխնոլոգիաների կիրառման, արդի սարքավորումների ձեռք բերման ի օգտագործման մեջ:

Արտադրանքը հիմնականում սպառվում է ներքին շուկայում, որտեղ Ընկերությունը իր արտադրատեսակներով զբաղեցնում է կայուն դիրք: Իրացումը հիմնականում իրականացվում է Ընկերության ֆիրմային խանութների: Արտադրանքի վաճառքը իրականացվում է նաև տարբեր առևտրային կետերին մատակարարելու միջոցով, սակայն դրանցից ոչ մեկը որպես խոշոր սպառող չի դիտվում:

Հիմնական մրցակիցներ են համարվում օղի, գինի, կոնյակ արտադրող ընկերությունները:

Ընկերությունը չունի այնպիսի մատակարարներ, որոնց բաժին է ընկնում ապրանքանյութական արժեքների ընդհանուր մատակարարման 10 տոկոսից ավելին:

Ընկերությունն ունի գործունեության իրականացման համար հատուկ լիցենզիաներ, որոնք տրված են անժամկետ:

Ընկերությունն իր գործունեության մեջ ունի ներգրավված հողատարածքներ, շենքեր, շինություններ, որոնք մեծամասնությամբ կենտրոնացված են ք. Երևան Թբիլիսյան խճուղի 20 հասցեում:

Աշխատողների միջին թվաքանակը 2012թ. երկրերոջ եռամսյակի ընթացքում կազմել է 228մարդ:

Ընկերությունը չունի այնպիսի աշխատակիցներ, որոնց տարեկան վարձատրությունը գերազանցում է նվազագույն աշխատավարձի տասնհազարապատիկը:

Ընկերությանը հարկային արտոնություններ տրված չեն:

Ընկերության նկատմամբ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում դատարանի կողմից պատասխանատվության միջոցներ չեն կիրառվել:

Ընկերության հաշվապահական հաշվեկշռում արտացոլված տույժ-տուգանքների գումարները գոյացել են հաշվարկված և որոշ ուշացումներով հարկերի և այլ պարտադիր վճարների վճարման հետևանքով: Բոլոր տեսակի հաշվետվությունները Ընկերության կողմից ներկայացվել են գործող օրենսդրությանը համապատասխան և առանց ժամկետների խախտման:

Ընկերությունը 2012թ. առաջին եռամսյակի ընթացքում փոխկապակցված անձանց հետ կատարել է ներքոհիշյալ գործարքները.

Ընկերության Դիտորդ Խորհրդի նախագահ Յրայր Յակոբյանը 1.461.000 (մեկ միլիոն չորս հարյուր վաթսուներեկ հազար) դրամ անտոկոս փոխառություն է տրամադրել Ընկերությանը շրջանառու միջոցների ձեռք բերման համար`մինչև 30.04.2013թ. հետ վերադարձնելու պայմանով:

Ընկերության խոշոր բաժնետեր Վերսանդիկ Յակոբյանը 6.119.800 (վեց միլիոն մեկ հարյուր տասնինը հազար ութ հարյուր) դրամ անտոկոս փոխառություն է տրամադրել Ընկերությանը շրջանառու միջոցների ձեռք բերման համար`մինչև 30.04.2013թ. հետ վերադարձնելու պայմանով:

Ընկերության խոշոր բաժնետեր Վերսանդիկ Յակոբյանը 18.000.000 (տասնութ միլիոն) դրամ անտոկոս փոխառություն է տրամադրել Ընկերությանը շրջանառու միջոցների ձեռք բերման համար`մինչև 30.05.2013թ. հետ վերադարձնելու պայմանով:

Տրամադրվող միջոցները անհրաժեշտ են Ընկերությանը տնտեսական գործունեությունը խթանելու համար` շրջանառու միջոցների համալրման նպատակով:

Հաշվետու ժամանակաշրջանում փոխկապակցված անձանց հետ այլ գործարքներ տեղի չեն ունեցել:

Ստորև ներկայացվում է Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ի կողմից 2012թ. առաջին կիսամյակի ընթացքում հաշվարկված և պետ. բյուջե վճարված գումարները ըստ հարկատեսակների

հազ. դրամ

h/h	Հարկատեսակ	Հաշվարկվել է	Վճարվել է
1	ԱԱՀ	(18708)	36000
2	Ակցիզային հարկ	3702	39200
3	Եկամտահարկ	11315	12700
4	Շահութահարկ	-	12500
5	Գույքահարկ	810	856
6	Հողի հարկ	927	1000
7	Բնապահպանական վճար	150	191

Հաշվետու եռամսյակի ընթացքում ԸՆԿերությունը շարունակել է մի շարք կազմակերպությունների հետ կնքված ակտիվային խմիչքների մատակարարման պայմանագրերի շրջանակներում իր կողմից ստանձնած պարտավորությունների կատարումը՝ Գնորդ կազմակերպությունների պատվիրված ապրանքների արտահանումը, մասնավորապես ՌԴ քաղաք Մոսկվա՝ «Արմա-Ֆրանս» ՍՊԸ-ի և մի շարք այլ կազմակերպությունների հասցեներով: ԸՆԿերությունը նպատակ ունի իր ապրանքային տեսականին լայնորեն ներկայացնի ռուսական ինչպես նաև եվրոպական շուկաներում, դրանով ապահովելով արտահանման կայուն ծավալներ և ֆինանսական միջոցների մշտական ներհոսք:

Նման գործարքները իրականացումը նպաստում է ինչպես ԸՆԿերության ֆինանսատնտեսական զարգացմանը, այնպես էլ ակնկալում է փոխաշահավետ համագործակցության հեռանկարներ, որն էլ ավելի կընդլայնի գործընկերության շրջանակները և կապահովի ֆինանսական միջոցների մշտական ներհոսք դեպի ՀՀ և որոշ չափով կավելացնի ապրանքատնտեսական շրջանառությունը երկրների միջև: Իհարկե նման գործարքների ռիսկայնության ցուցանիշը բարձր է դիտվում, քան որ Գնորդ հանդիսացող կողմերը չեն ապահովում կանխավճար, ըստ կնքված պայմանագրերի վճարումները կատարվում են հետաձգված եղանակով, որը կարող է հետագայում ազդեցություն թողնել ԸՆԿերության վրա կապված արտարժույթների կուրսերի փոփոխման հետ:

Հաշվետու եռամսյակի ընթացքում նույնպես շարունակվում է դիտվել իրացման ծավալների անկում: Մշտապես ուսումնասիրվում են նոր շուկաներ մուտք գործելու հնարավորությունները, մասնավորապես ԱՊՀ և եվրոպական երկրներ:

Մշտապես պլանավորվում են զարգացման հեռանկարները, քանի որ ներկա պահին ԸՆԿերությունը աշխատում է իր հզորության մոտ 30 տոկոսի չափով: Մշակվում են

արտադրության և սպառման օպտիմալ, ճկուն տարբերակներ, որոնք կկարողանան ապահովել բիզնեսի հնարավորինս կայուն զարգացում: Սպառման ծավալների ընդլայնման նպատակով Ընկերությունը ճկուն գնային քաղաքականություն է վարում իր արտադրանքն առաջարկելով ինչպես խոշոր իրացում ապահովող ցանցերին, այնպես էլ մանրածախ վաճառակետերին, միաժամանակ ապահովելով նրանց մեջ առողջ մրցակցություն, թույլ չտալով ոտնահարելու որևէ սպառողի (ինչպես բիզնես, այնպես էլ վերջնական) օրինական շահերը:

Ակտիվների 5 տոկոսը գերազանցող գործարքներ չեն իրականացվել:

Ընկերության ղեկավարության կարծիքով այսքանն է այն կարևոր դեպքերի նկարագիրը, որոնք կարող են որոշակի ազդեցություն ունենալ Ընկերության ֆինասատնտեսական վիճակի վրա:

Ձեկույցը հրապարակեց

Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ի

Գործադիր տնօրեն

Ֆիամետա Ֆրանսիկի Հակոբյան